

Հ. Բ. Ը. Միութեան վերանորոգւած կենտրոնատեղիի բացումը

Մի քանի ամիս տեւած աշխատանքից յետոյ՝ իրենց աւարտին հասան Հայկ. բարեգործական ընդհ. միութեան կենտրոնատեղիի նորոգութեան ու բարեփոխութեան աշխատանքները : Շաբաթ, նոյեմբերի 13-ին, երեկ. ժամը 7-ին, մի հանդիսութեամբ տօնուեց այդ վերանորոգւած կենտրոնատեղիի բացումը որին ներկայ էին՝ Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Ս. Մեպուհ արք. Սարգսեանը Ուրմիայի հոգեւոր հովիւ Ս. Ստեփանոս վրդ. Փաշայեանը, Անթիլիասից ժամանած Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբան Ս. Թորգոմ արք. Տօնոյեանը, Իրանի Հայ Աւետարանական Եկեղեցու հոգեւոր հովիւ Վեր. Սերգէյ Շահվերդեանը Թ. Հ. Թեմական խորհրդի ու միութիւնների ներկայացուցիչներ, Հ. Բ. Ը. միութեան վարչութեան անդամները եւ կենտրոնատեղիի վերանորոգմանը մասնակցած անձինք

Սրբազան Հայրը կենտրոնատեղի մուտք գործելով՝ նախ օրհնեց մատուցւած աղուհացը, ապա ժապաւենը հատելով՝ բացումը կատարեց վերանորոգւած կենտրոնատեղիի: Այնուհետեւ հանդիսութիւնն սկսուեց «Մեր հայրենիք» օրհներգի եւ Հ.Բ.Ը.Մ.-ի հիմներգի յոտնկայս ունկնդրութեամբ, որից յետոյ ծրագրի բացման խօսքն ասաց Թայիկ Դանիէլեանը Կենտրոնատեղիի վերանորոգման աշխատանքների գեկոյցը, պատկան աշխատանքների իրականացման գործընթացը պատկերող սահիկների ցուցադրմամբ, ներկայացրեց այդ աշխատանքներին մասնակցած Էդուարդ Բաբեանը: Ապա օրւայ առթիւ միութեան խօսքը փոխանցեց Հայկ. բարեգործական ընդհ. միութեան Թեհրանի մասնաճիւղի նախագահուհի Աստղիկ Բաբայեանը:

Ծրագրի գեղարուեստական բաժնում, որը վարում էր Վանէ Բաբախանեանը, ասմունքներով ելոյթ ունեցան՝ Անգինէ Վարդանեանը, Լեոնիկ Իսայեանը եւ Ժողէֆ Ամիրեանը, երկու պարային կատարումներով հանդէս եկան Հ. Ուս. «Չհարմահալ» միութեան յարկի տակ գործող «Ակունք» պարային համոյթի սաները՝ Կարինէ Մանուչերեանի ղեկավարութեամբ, եւ մեներգեցին՝ Զօրիկ Ֆարհադեանն ու Լուսինէ Միքայէլեանը՝ Լուիզա Աւետիսեանի դաշնամուրի ընկերակցութեամբ: Հանդիսութեան աւարտին Սրբազան Հայրը բեմ հրաւիրելով՝ շնորհաւորեց Հ. Բ. Ը. Միութեան վերանորոգւած կենտրոնատեղիի բացումը եւ այդ վերանորոգման աշխատանքները համարելով միասնական աշխատանքի արդիւնք՝ իր խօսքում ընդգծեց հաւաքական աշխատանքներում համագործակցութեան ու միասնականութեան գործօնների առկայութեան անհրաժեշտութիւնը՝ որպէս որեւէ աշխատանքի յաջողութեան ու արդիւնաւորման երաշխիք Ծրագրի վերջին բաժնում Սրբազան Հօր ձեռամբ յուշանւերներ յանձնուեցին այն բոլոր անձանց, ովքեր դերակատարութիւն են ունեցել կենտրոնատեղիի վերանորոգման աշխատանքներում, որից յետոյ տեղի ունեցաւ ընդունելութիւն, որը կազմակերպւել էր միութեան Տիկնանց մասնաճիւղի միջոցո :